Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

351.74
Ъ-11

351.74
Z-11
ազ.
01 MAR 2010

ՊԱՀԱԿԱՅԻՆ ԳՐՔԱՐԿԿ

(ПОСТОВАЯ КНИЖКА)

Միլիցոներ .....

.....

Հ. Ս. Խ. Հ. ..... Գավմիլիցիայի

1008
384690

..... Քաղաքամաս

Անձնագրաց № .....

Չեկիի № .....

192 թ.

25 FEB 2014

39.416

Գրառեպ. № 299 բ. տիրաժ 150 պատվեր № 44

Զանգզավոգծկոմի Տեղտնտեսության Տպարան

Անուն .....

Հայրանուն .....

Ազգանուն .....

Տարիք .....

Ծննդավայր .....

Ընտանեկան կացություն .....

.....

Ծառայության ընդունվելու ժամանակը

..... Հրաման № .....

Գահակատեղի № .....

« ..... » ..... 19 թ.

№ .....

Միլիցապետ՝

Քարտուղար՝

ԿԱՆՈՆՆԵՐ

1. Այս գրքույկը գտնվում է միլիցոնների մոտ ծառայության ամբողջ ժամանակ։

2. Գրքույկը պետք է վերադարձնել Միլվարչության միլիցոներին ծառայությունից մի անգամայն ազատելուց հետո։

3. Գրքույկի առաջին կիսում նշանակվում են պետերի և հերթապահների բոլոր սաուգումներն իրենց ստորագրությամբ, ինչպես նաև պատահարները։

4. Գրքույկի յերկրորդ կեսը միլիցոներին ծառայում է հիշողության և գրանցումների համար—անձանց ազգանունները, փողոցների անունները, տների և հեռախոսների №№-ը ազդանշանները, պետական հիմնարկությունների, դեղատների, հիվանդանոցների, վոլբանոցների, բժիշկների, մանկաբարձուհիների և այլ հասցեները գրելու։

5. Պահակային գրքույկի հետ անհրաժեշտ է միլիցոներին ունենալ Միլիցիայի «Հրահանգը»։

«Հաստատվում է»
Ներքգործ ժողկոմ՝ Դուրգարյան
Հանրմիլպետ՝ Ա. Բերբերյան
«3» Հունվարի, 1926 թ.

ՀՐԱՀԱՆԳ

ՊԱՀԱԿԱՅԻՆ ՄԻԼԻՑՈՆԵՐԻՄ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Միլիցիական պահակատեղ կոչվում է քաղաքի կամ գյուղաքաղաքի այն մասը, վորի հսկողությունը և պաշտպանությունը հանձնվում է այդ նպատակի համար նշանակված հատուկ միլիցիոներին։

2. Պահակատեղի հսկողության և պաշտպանության համար նշանակված միլիցոները կոչվում է պահակային միլիցիոներ։

3. Պահակատեղում նշանակված միլիցիոնները պարտավոր է առանց բացակայելու մնալ այնտեղ մինչև իրեն փոխարինելը, կամ մինչև իր պետի հրամանը։

4. Պահակային միլիցիոնները կարող է թողնել պահակատեղն առանց իրեն փոխարինելու կամ պետի կարգադրության միայն հետևյալ դեպքերում.

ա) Իր պահակատեղի շրջանի մոտերքում տեղի ունեցող անկարգությունը կամ հանցագործությունը կարգելու համար,

բ) Փախչող հանցագործին կամ կալանավորին հետապնդելու համար,

գ) Հանցագործություններից կամ դժբախտ պատահարներից տուժած հիվանդներին և այլ անձանց օգնություն հասցնելու համար,

դ) Միլիցիայի Վարչությունը ձերբակալվածներ բերելու համար։

5. Նախընթաց հոդվածում մատնանշված պատճառներով կամ թե անակնկալ հիվանդության պատճառով, եթե անհրաժեշտ

լինի պահակատեղից բացակայել, պահակային միլիցիոնները միջոցներ է ձեռք առնում պահակատեղի ժամանակավոր հսկողությունը հարևան պահակային միլիցիոներին կամ դռնապանին հանձնելու։

6. Պահակային միլիցիոներն ընդունում է պահակատեղը իրեն հատկացրած զենքով, վորը պետք է լինի կանոնավոր և պատրաստ գործածելու համար։

7. Պահակային միլիցիոներն իր ծառայության պարտականությունները կատարելիս կարող է զենք գործածել հետևյալ դեպքերում։

ա) Ինքնապաշտպանության, այսինքն՝ զինված հարձակումների դեպքում իր անձը պաշտպանելու համար։

բ) Դիմադրելու իր վրա կատարված հարձակման, վորը թեկուզ և վոչ զինված, բայց ակներև սպառնում է նրա կյանքին, առողջությանը, կամ խլել նրա զենքը այնպիսի հանգամանքներում, յերբ պաշտպանության վոչ մի այլ միջոց հնարավոր չէ,

գ) Յերբ վոր զինված դիմադրություն են ցույց տալիս նրա որինական պահանջներն,

դ) Ուրիշներին պաշտպանելու հարձակումից, ակնհայտնի սպառնում է նոցա կյանքին, առողջության, անձնական անձեռնմխելիության, յերբ այլ պաշտպանության միջոցներ գործադրել անհնարին է,

յե) Ուրիշի գույքին բռնի կերպով տիրանալը արգելելու համար, յերբ այլ միջոցների գործադրությունն ապարդյուն է անցել,

զ) Հանցագործներին և կալանքից փախած կալանավորներին ձերբակալելու համար, յերբ նոցա ձերբակալումը հնարավոր է միայն զենքով։

8. 7-րդ հոդվածի «բ» կետում հիշված դեպքերում պահակային միլիցոնները զենք գործածելուց առաջ զգուշացնում է, կանչելով։

9. Պահակային միլիցոնները, զենք գործածելիս, ձեռք է առնում բոլոր հնարավոր

միջոցները, վորպեսզի զենքի գործադրությունից մասնավոր անձինք չտուժեն։

10. Այն դեպքում, յերբ զենքի գործադրության հետևանքը յեղել է մեկի մահը կամ վիրավորումը, պահակային միլիցոնները անմիջապես հեռախոսով կամ այլ կերպ հաղորդում է քաղաքամասի հերթապահին։ Մնացած դեպքերում զենքի գործածության մասին պահակային միլիցիոնները հաղորդում է պահակատեղից փոխարինվելուց հետո իր անմիջական իշխանության։

11. Յերբ վոր հնարավոր չէ բավականանալ սեփական ուժերով կամ ոգնության կանչելով գոնապաններին և այն առանց, վորոնց հատուկ հանձնարարված է կարգ ու բարեկարգություն պահպանել (պահապաններին և այլն), պահակատեղի միլիցիոնները դիմում է քաղաքացիների ոգնության՝

ա) Միլիցիոներից թաղվող անձի հետապնդելու և ձերբակալելու համար,

բ) Քաղաքամասին շտապ հաղորդագրություն հանձնելու համար,

գ) Հատուկ խնամակալության կարոտ անձանց մինչև նրանց ցույց ված տեղը ուղղելու համար,

դ) Դժբախտ պատահարների ժամանակ ոգնություն հասցնելու համար,

12. Քաղաքացիների կողմից աջակցություն և ոգնություն ստանալու անհրաժեշտության դեպքում (հոդ. 11-րդ), պահակատեղի միլիցոներն առաջին հերթին դիմում և պատահարի տեղում գտնվող կամ մոտից անցնող զինվորական ծառայողներին և իրեն անձնապես ծանոթ անձանց։

13. Ցերը վոր անհրաժեշտ է դիմել այլ պահակատեղերում կանգնած միլիցիոներների ոգնության, պահակատեղի միլիցիոները ազրանշան և տալիս՝

ա) Ոգնության նպատակով-յերկու կարճ, իրար հետեղ սուլոցներ իր մոտ կանչելու համար։ Այդ ազդանշանը (սիգնալ)

պետք է կրկնել այնպես, վոր անընդհատ սուլոցի քնույթ չստանա,

բ) «Ձերբակալիր»—յերկարատև անընդհատ սուլոց, յերբ անհրաժեշտ է մոտակա միլիցիոների ուշադրությունը հրավիրել փախչող մարդու կամ հոռացող կարքի վրա։

14. Պահակատեղի միլիցիոներն իրավունք ունի ոգտվել կառքերից, սայլակներից ու վարձու ավտոմոբիլներից՝

ա) Հանկարծակի մեռածներին, հիվանդներին, վիրավորվածներին և ընդհանրապես հանցագործություններից կամ դժբախտ պատահարներից տուժած քաղաքացիներին տուն հիվանդանոց և այլ համապատասխան վայր հասցնելու համար՝

բ) Սաստիկ հարբած դրության մեջ գտնվող քաղաքացիներին քաղաքամաս հասցնելու համար,

գ) Ձերբակալման յենթակա անձանց հետապնդելու համար։

2. ՊԱՀԱԿԱՏԻՆ ՄԻԼԻՑԻՈՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Պահակային միլիցիոնները պահակատեղից փոխվելիս պարտավոր է տեղակացնել իրեն փոխարինողին պահակատեղի դրության, կան արդյոք չի կատարված վորևե կարգադրություններ և թե անհրաժեշտ շարունակել վորևե մեկի կամ մի բանի վրա սահմանված հսկողությունը։

16. Պահակային միլիցիոնները պետք է պարզ գաղափար ունենա քաղաքի հատակագծի և իր ծառայած քաղաքամասի բոլոր պահակատեղերի մասին։ Այն միլիցիոնները, վորոնք գտնվում են հարևան քաղաքամասերին հարակից պահակատեղերում, պետք է տեղյակ լինեն այդ քաղաքամասերի մոտակա պահակատեղերին։

17. Պահակատեղի միլիցիոնները պարտավոր է դիտենալ՝

ա) Իր պահակատեղի համարը,

բ) Պահակատեղը շրջապատող փողոցները, նրբանցքները, փակուղիները, հրապարակները և յերկու կամ ավելի մուտք ունեցող բակերը,

գ) Տների համարների կարգը,

դ) Իր պահակատեղի շրջանում գտնըված կառապանների կայանները, նոցա համարները,

յե) Հրդեհաշեջ խմբի աղդանշանները,

զ) Մոտակա զորամասերի և Արտակարգ Հանձնաժողովի բաժինների տեղերը,

ե) Ժողովրդի ամենաշատ կուտակված տեղերը՝ ճաշարանները, պանդոկները, սրճարանները, թատրոնները, կինեմատոգրաֆները, դրոսավայրերը և այլ զվարճատեղերը,

ը) Մոտակա դեղատների, հիվանդանոցների, ընդունարանների, ծննդաբերության տների, բժիշկների և մանկաբարձուհիների հասցեները,

թ) Քաղաքամասում գտնվող պետական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների հասցեները։

18. Պահակատեղի միլիցիոնները պարտաւոր է իր մոտ ունենալ՝

ա) Անձնական համարային նշանը,

բ) Սուլիչը,

գ) Պահակատեղի գրքույկը, հրահանգներով և ուղեցույց տեղեկություններով,

դ) Զենքը։

19. Պահակատեղի ընդհանուր հսկողության նպատակով պահակատեղի միլիցիոնները պարտավոր է ժամանակ առ ժամանակ շրջակայել իր պահակատեղի շրջանում, մանավանդ մութն ընկնելուց հետո։

20. Պահակային միլիցիոներին արգելվում է իրեն հատկացրած զենքը ձեռքից բաց թողնել կամ մեկ ուրիշին տալ, առանց իր անմիջական պետի կարգադրության։ Պետի կարգադրությամբ զենքն ուրիշին հանձնելու մասին պահակային միլիցիոները զեկուցում է քաղաքամասի պետին։

21. Պահակային միլիցիոներին արգելվում է պահակատեղում քնել, խոսել, կամ

զբաղվել իր ծառայության պարտականություններին չվերաբերվող գործով։

22. Քաղաքացիների հետ վարվելիս պահակային միլիցիոները պետք է լինի քաջալավարի ու պատրաստակամ և խոսել «դուք»—ով։

23. Կարգի խանգարման առաջն առնելու համար միլիցիոները քաղաքացիներին վորոշ պահանջներ է առաջադրում որինական կարգի պահպանության մասին, բացատրելով այն նրանց այդ դեպքում, յեթե կարգի խանգարումն առաջանում է պարզապես քաղաքացիների անիրազեկ լինելուց։ Առաջադրված պահանջը չկատարելու դեպքում պահակային միլիցիոները ձեռք է առնում բոլոր որինական միջոցները, կարգը վերականգնելու և խանգարողի անձնավորությունը պարզելու համար։

24. Կարգը խանգարողի անձնավորությունը պարզելու համար միլիցիոները պարտավոր է պահանջել նրանից համապատասխան փաստաթուղթ։

Նման փաստաթղթերը կարող են լինել՝

ա) Ներքգործծողկոմատի կողմից սահմանված ձևի անձնական վկայականը,

բ) Կարգը խանգարողի մոտ գտնվող վորևե փաստաթուղթ, վորը տրված է նրա պետհաստատությունների կամ Արմիության կողմից համապատասխան ստորագրություններով ու կնիքով, ուր նշանակված է նրա իսկական անունը և աշխատանքի, պաշտոնի կամ բնակության տեղը։

25. Եթե կարգը խանգարողի մոտ չկա 24-րդ հոդվածում մատնանշված փաստաթուղթը, կամ թե ներկայացրած փաստաթուղթը ճիշտ չէ, ժամանակը անց է կած հիմնավոր կասկած է հարուցանում ձևի կամ պատկանելության կողմից և յեթե հնարավոր չէ պարզել նրա անձնավորությունը մի այլ կերպ, օրինակ՝ պատահարը կատարված վայրում գտնվող քաղաքացիների վկայությամբ, այն ժամանակ պահակային միլիցիոնները հրավիրում է նրան հետևել քաղաքամասը՝ պարզելու նրա ով լինելը, իսկ յեթե նա մերժում է գալ, տանում է ստիպողական կարգով։

3. ՊԱՇԱԿԱՅԻՆ ՄԻԼԻՑԻՈՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1008/38490

26. Քրեական հանցահործությունների առաջն առնելու և վերացնելու նպատակով պահակային միլիցիոնները՝

ա) Հսկում է բոլոր կասկած հարուցանող տեղերի և անձանց վրա.

բ) Նկատածի մասին զեկուցում է վոչշված կարգով անհետաձգելի դեպքերում անմիջապես, իսկ Ցեացած դեպքերում՝ պահակատեղը հանձնելուց հետո։

27. Պահակային միլիցոնները տեղականալով իր պահակատեղի շրջանում արդեն կատարված հանցագործության մասին, պարտավոր է անմիջապես գնալ հանցագործության տեղը, միջոցներ ձեռք առնել

հանցագործության հետքերը պահպանելու և հաղորդել պատահածի մասին Միլվարչությանը։

28. Հանցագործության նշաններ ունեցող յուրաքանչյուր պատահարի դեպքում պահակային միլիցիոնները պարտավոր է պարզել, թե ով վկա է պատահարին, գրել նոցա կոչումը կամ ծագումը, անունը հայրանունը, ազգանունը և հասցեն՝ Միլվարչությանը հաղորդելու համար։

29. Պահակային միլիցիոնները ձերբակալում և ուղարկում է Միլվարչության՝

ա) Այն անձանց, վորոնք բռնված են անմիջապես հանցագործության համար պատրաստվելիս,

բ) Այն անձանց, վորոնք բռնվել են անմիջապես հանցագործություն կատարելիս կամ հանցագործությունը կատարելուց քիչ հետո։

30. Հանցագործության մեջ կասկածվող անձանց պահակային միլիցոնները ձերբակալում և ուղարկում է Միլվարչությունը հետևյալ դեպքերում։

ա) Յերբ վոր տուժողը կամ ականատեսներն ուղղակի մատնանշեն կասկածվող անձնավորությանը, իբրև հանցագործություն կատարողի,

բ) Յերբ վոր կասկածելի անձնավորության վրա գտնվեն հանցագործության ակներև հետքեր (արյան բծեր, մարմնի կամ հագուստի վրա կռվից մնացած հետքեր և այլն),

գ) Յերբ վոր կասկածվողը մշտական բնակավայր կամ մշտական զբաղմունքի տեղ չունի,

դ) Յերբ վոր կասկածվող անձնավորությունը չի պարզված։

31. Պահակային միլիցիոնները պարտավոր է իր ձերվակալած անձից (հոդ. 29 և 30) անմիջապես խլել զենքը կամ հանցագործության այլ գործիքը, յեթե այն յերևան է հանված և հետևել, վոր Միլվաչությունը գնալիս ձերբակալվածը ճանապարհին վոչ մի իր դեն չձգի։

Հանցագործության վկաներին և հանցագործության կատարման մասին կասկած հայտնող անձանց պահակային միլիցիոներն առաջարկում է հետևել Միլվարչությանը ձերբակալվածի հետ միասին, իսկ յեթե նրանք մերժում են, առնում է նրանց ստիպողական կարգով։

32. Յերբ վոր պահակատեղի շրջանում յերևան են գալիս վերևի հետքեր կամ առարկաներ, վորոնք ապացուցում են, թե հանցագործություն է կատարված, պահակային միլիցիոներն անմիջապես հաղորդում է այդ մասին քաղաքամաս և միջոցներ է ձեռք առնում պահպանելու այդ հետքերն ու առարկաները մինչև կանչված իշխանության որդսոնների գալը։

33. Յերբ վոր քրեական հետախուզության գործակալները դիմում են պահակային միլիցիոների աջակցությանը, նա պարտավոր է նրանց կոչումը պարզելուց հետո կատարել, նույա որինական պահանջները, չխուսափելով սակայն պահակային ծառայությանը վերաբերյալ սահմանված կանոնները։

4. ՀԱԿՈՇԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՅԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Պահակային միլիցիոներն անմիջապես զգաստացնում է ամեն տեսակի հակահեղափոխական կոչերը, փողոցներում արտասանած հակահեղափոխական ճառերը, իրենց նշանակությամբ Խորհրդային իշխանության հակառակ խոսվարար դրոշակների, եմբլեմների և պլակատների ցուցադրումը, նույն բնույթի թերթերի վաճառքը, բաժանումը և այլն։ Այդպիսի բաների մեջ հանցավոր անձանց պահակային միլիցիոները ձերբակալում և ուղարկում է Միլվարչությունը և միաժամանակ միջոցներ է ձեռք առնում, վորպեսզի պատերին փակցրված և թափված պլակատները, թերթերը և այլն, ըստ հնարավորության հա-

վաքվեն՝ ուղղակիորեն Միլիարչությանը, իրթիվ իրական ապացույց։

35. Յերբ վոր պահակատեղի շրջանում ծագում է կազմակերպված հակահեղափոխական յելույթ, այն է՝ յեթե, ցույց, հավաքույթ, միտինգ, կամ թե նույն շրջանում յերևան են գալիս հակահեղափոխական զինված խմբակներ կամ առանձին զինված անձինք, հակահեղափոխական նպատակներով, նմանապես յերբվոր դիտավորյալ կերպով փչացվում են հեռագրական և հեռախոսային ցանցերը, պահակային միլիցիոներն այդ մասին հեռախոսով կամ վորևե այլ ձևով անմիջապես հաղորդում է Միլիարչությանը, իսկ յեթե հնարավոր չե այդ անել, հաղորդում է անմիջականորեն Արտակարգ Հանձնաժողովին կամ ժոտակա զինվորական մասին, մասի կոմիսարին կամ պետին, կամ թե ըստ պաշտոնի ավագ զինվորական ծառայողներին։

Մինչև նրան տեղեկացրած իշխանության որգանների տեղ հասնելը, պահակային միլիցիոները, չթողնելով այս հոդվածում մատնանշված յելույթների դիտողությունը, միջոցներ է ձեռք առնում պարզելու նրանց չափը, բնույթը և նպատակը, յեկող իշխանության որգանների զեկուցելու համար, յեթե հնարավորություն կա ձերբակալում է յելույթի զեկավարներին կամ առանձին մասնակիցներին։

36. Յեթե պահակային միլիցիոները իմանում է, թե իր պահակատեղի շրջանում վորևե՛տեղ քաղաքացիները հակահեղափոխական ժողով են անում, այդ մասին նա հեռախոսով կամ այլ ձևով անհապաղ հաղորդում է Միլիարչությանը, իսկ յեթե այդ անհնարին է, անմիջապես հաղորդում Արտակարգ Հանձնաժողովի որգանին, միաժամանակ հսկողություն սահմանելով ժողովների տեղի վրա՝ նկատածի մասին յեկող իշխանության մարմիններին զեկուցելու համար։

5. ՓՈՂՈՑՆԵՐԻ ՅԵՐԹԵՎԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՎՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՐԳԻ ՎՐԱ ՀՍԿԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

37. Պահակային միլիցիոնները իր պահակատեղի սահմաններում պահպանում է փողոցի աղատ և ապահով յերթևեկութիւնը, ղեկավարվելով այդ նպատակի համար տեղական իշխանության կողմից հրատարակված պարտադիր վորոշումներով։

38. Պահակային միլիցիոնները դատարեցնում է հանրային անդրորութիւնը խանգարող տուր ու դմփոցը, կռիվները և աղմուկը։

39. Պահակային միլիցիոնները արգելում է սրիկայության վորևե արտահայտություն, այսինքն՝ անբարիշտ, աննպատակ և դեպի առանձին քաղաքացիները կամ ամբողջ հասարակությունն անարգանք արտահայտող գործողությունները (քրեական օրենսգրքի 176 հոդ.) այդպիսի գործողություններին մեջ նկատված անձանց միլիցիոնները ձերբակալում և ուղարկում է Միլվարչությունը։

40. Պահակային միլիցիոնները վերացնում է անամոթության ամեն մի արտահայտություն, վոր ակներև վիրավորում է քաղաքացիների բարոյական զգացմունքները. ինչպես օրինակ՝ բնական կարիքների աշկաբա կատարելը, կոպիտ կերպով անբարոյականության կոչելը, անամոթ խոսքեր ասելը և այլն։

41. Այն անձանց, վորոնք գտնվում են հարբած գրության մեջ, վորոնք վտանգ են սպառնում թե իրենց անձին և թե շրջապատողներին, պահակային միլիցիոնները ձերբակալում և ուղարկում է քաղաքամաս։

42. Պահակային միլիցիոնները արգելում է փողոցներում, զբոսավայրում, հրապարակներում թղթախաղը, վեգ խաղալը և այլ գայթակղեցնող խաղերը։

6. ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

43. Պահակային միլիցիոնները հսկում է իր պահակատեղի շրջանում փողոցների, զբոսավայրի և հրապարակների բարեկարգության, մաքրության և կարգ ու կանոնի վրա՝ համաձայն այդ մասին տեղական իշխանության կողմից հրատարակված պարտադիր վորոշումների։

44. Պահակային միլիցիոնները հետևում է, վոր ֆաս չհասցվի պատմական, գեղարվեստական և հնության հուշարձաններին, նմանապես փողոցների, հրապարակների, զբոսավայրերի և այգիների ծառատունկերին։ Այդ հանցագործություններում բռնված անձանց պահակատեղի միլիցիոնները ձերբակալում և ուղարկում է քաղաքամասը։

7. ԱՌԵՎՏՐԻ ՎՐԱ ՀՍԿԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

45. Պահակային միլիցիոնները հետևում

է, վոր իր շրջանի փողոցներում և հրապարակներում առևտուրը կատարվի համաձայն տեղական իշխանության կողմից սահմանված պարտադիր վորոշումների։

46. Պահակային միլիցիոնները հետևում է, վոր առևտուրը չկատարվի դրա համար չհատկացված տեղերում։

47. Պահակային միլիցիոնները հետևում է, վոր առևտուրը չկատարվի այն օրերին ու ժամերին, յերբ ըստ օրենքի կամ տեղական իշխանության սահմանած պարտադիր վորոշման, արգելվում է առևտուրը կամ թե հրահանգվում է փակել առևտրական ձեռնարկները և դադարեցնել փողոցային առևտուրը։

8. ԱՆԽՆԱՄՆԵՐԻՆ, ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՅԵՎ ԴԺԲԱԽՏ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՎԵՐՍԲԵՐՅԱԼ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

48. Պահակային միլիցիոնները,

ա) Մոլորված և անխնամ թողնված յե-

բեխանները ուղարկում է մոտակա մանկական կայանները կամ Միլվարչությունը, հանձնելով նրանց հարևան պահակային միլիցիոներին կամ այն քաղաքացիներին, որոնք վայելում են նրանց վստահությունը։

ը) Փողոցով անցնող հիվանդ կամ դժբախտ պատահարից տուժած քաղաքացիներին ցույց է տալիս, յեթե դրանում կարիք է զգացվում, սկզբնական ոգնություն, պահանջում է շուտափույթ ոգնության կոչը կամ հասցնում է նրանց մոտակա հիվանդանոցը կամ դեղատունը։

գ) Իրենց վարքով իրենց կամ շրջապատողներին վտանգ սպառնացող հոգեկան հիվանդներին հասցնում է Միլվարչությունը կամ մոտակա հիվանդանոցը։

դ) Սպանվածների, հանկարծակի մահացածների կամ ինքնասպանություն գործածներին դիակները թողնում է նույն դրության մեջ, ինչպես վոր նոքա գտնվել են, միջոցներ և ձեռք առնում ըստ հնարավորության անձեռնմխելի պահելու նրանց

շրջապատը և պատահածի մասին անմիջապես հաղորդում է Միլվարչությանը, թողնելով դիակի պահպանման համար ուրիշ միլիցիոներ կամ դռնապան, յերբ վոր իրեն անհրաժեշտ է բացակայել պատահարի վայրից։

49. Պահակային միլիցիոներն իր պահակատեղի շրջանում տեղի ունեցած յուրաքանչյուր հրդեհի մասին անմիջապես հաղորդվում և հրդեհային ազդանշանով, հեռախոսով կամ այլ և ձևով մոտակա հրդեհաշեջ խմբին, Միլվարչությանը և նույն տան վարչությանը կամ այնտեղ ապրողներից մեկին։

50. Պահակային միլիցոները մինչև հրդեհաշեջ խմբի և միլիցիայի գալը, ձեռք և առնում հրդեհը հանգցնելու, յերեխաներին քնածներին, հիվանդներին փոխադրելու և շտաբության մեջ գտնված կամ շինությունից դուրս հանած իրերի պահպանու-

թյան համար բոլոր անհրաժեշտ ու հնարավոր միջոցները։

51. Յեթե բռնկված շենքում գտնվում են պայթուցիկ նյութեր, պահակային միլիցիոներն անմիջապես միջոցներ է ձեռք առնում արգելելու ամբոխի կուտակումը հրդեհով բռնկված տան մոտ և մոտակա տների բնակիչներին տեղեկացնելու սպառնացող վտանգի մասին։

52. Հեղեղների դեպքում, յերբ ջուրը սպառնում է լցնել բնակելի շենքերը, պահեստները և շենքի այլ ներքին հարկերը, պահակային միլիցիոներն անհապաղ անձամբ կամ այլ ձևով նախազգուշացնում է քաղաքացիներին նոցա և նրանց գույքին սպառնացող վտանգի մասին։

53. Յերբ վոր փողոցներում յերևան են գալիս կատաղի և ընդհանրապես անցուդարձ անողներին ակնթարթով վտանգ սպառնացող շներ և այլ կենդանիներ, պահակային միլիցիոները գնահատարում է, միջոցներ ձեռք առնելով, վորպեսզի վնքի

գործածությունից փողոցով անցնող քաղաքացիները չտուժեն։

54. Պահակային միլիցիոները վորի պահակատեղը գտնվում է գետափին՝

ա) Արգելում է ուժեղ քամու ժամանակ ճանապարհորդներ փոխադրել,

բ) Հեռացնում է յերեխաներին գետի վտանգավոր ափերից,

գ) Արգելում է անց ու դարձ անել գետի վրայով, յերբ սառուցը բավականաչափ ամուր չէ,

դ) Արգելում է թափել գետն աղբ և այլ կեղտոտություններ,

յե) Ձեռք է առնում բոլոր իրենից կախված միջոցները, խեղդվողներին փրկելու համար և տուժածներին ցույց է տալիս առաջին ոգնություն։

ՆԳԺԿ-ի միլիցիայի տեսուչ՝

Խ. ԻԳԻԹԽԱՆՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0206717

39416